

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը հայտարարում է գործադիր մարմնի ընտրության բաց մրցույթ

«Հայաստանի արտահանման ապահովագրական ընկերություն» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն:

Մրցույթը կանցկացվի 27.04.2021թ. ժամը 11.00-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության շենքում, ք. Երևան, Մհեր Մկրտչյան 5:

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- Ֆինանսական, տնտեսագիտական կամ իրավաբանական բնագավառի բարձրագույն կրթություն,
- ձեռնարկատիրական կամ կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա կամ առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,
- իր պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ապահովագրության և այլ ֆինանսական, կորպորատիվ կառավարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, ՀՀ կենտրոնական բանկի համապատասխան իրավական ակտերի իմացություն),
- կազմակերպության զարգացման և բարեփոխման ծրագիր (հայեցակարգ, հիմնադրույթներ) մշակելու կարողություն,
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող ապահովագրական ընկերության գործադիր տնօրենի որակավորման վկայականի առկայություն (սեղմ ժամկետներում ստանալու հնարավորություն):

Նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է նաև՝

- տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ,
- ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն,

- առնվազն մեկ օտար լեզվի իմացություն
- գրական հայերենի տիրապետում:

Դիմող քաղաքացիները «Հայաստանի արտահանման ապահովագրական ընկերություն» պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս),
- գունավոր լուսանկար,
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- ինքնակենսագրություն,
- բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),
- տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,
- հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
- բնութագիր՝ վերջին աշխատավայրից (եթե կազմակերպությունը չի լուծարվել),
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի պատճենը՝ բնօրինակի հետ միասին,
- անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 10⁰⁰-ից մինչև 13⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 23.04.2021թ.:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության շենք, 9-րդ հարկ, 929 սեն. /ք. Երևան, Մ. Մկրտչյան 5, հեռ. 010-58-29-29/: